




ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ



Եր օնսպուրիկայի մայրաքաղաքի ամենագեղեցիկ կառուցումներն մեկն է՝ Մանկական երկաթուղին, որ շինված է Հրազդան գետի եզերքին, դեպի Երևանի կեդրոնական մասը բարձրացող սարալանջի մը վրա: Մանկական երկաթուղին ունի իր ինքնուրույն ոճով լայնանիստ շենքը, որ իր աշտարակովը կհատկանշվի: Մանկական երկաթուղիի ճամբորդական գլխավոր կայարանը, իր հարակից շենքերու մանրամասնությամբ, տեղավորված է գետափին վրա: Այնտեղ երկաթգիծերուն վրա պատրաստ կանգնած է Մանկական գնացքը իր գունագեղ և դրոշագարդ երեք բացօթյա փոքր վագոններով և շոգեքարշ մեքենայով: Հրազդանի եզերքով գնացքի մեկ շրջապտույտ կատարելը կտևե հազիվ 20 րոպե:

Մանկական երկաթուղիի դիմացի ափին, Ծիծեռնակաբերդի գահավիժող ժայռերն ու բլուրներն են կանգնած: Անոնց ստորոտին կանցնի Հրազդան գետը, իր արագավազ հորձանքներու շառաչով: Մանկական երկաթուղին իր կանաչապատ տարածություններուն մեջ կընդգրկե զբոսայգիներ, մանկական հրապարակներ, խաղագետիկներ, պտղատու պարտեզներ և անտառներ:



Մանկական երկաթուղին հիմնադրվեցավ 1936 թվականի աշնան: Այդ օրեն 16 տարի վերջ, 1952 թվականի հունիսի 10-ին, առաջին անգամը ըլլալով գյուղատնտես բարեկամուհիի հետ այցելեցինք Մանկական երկաթուղին: Անցյալի տառապագին ճամբորդության հետքն իսկ չէր մնացել: Մեր ինքնաշարժը անցնելով Հաղթանակի նորակերտ կամուրջն,


թքվեցավ Հրազդանի գետեզրին երկարող ասֆալտապատ խճուղիով, որուն նորատունկ ծառադարձ եզերքները կոտորեին Հրազդանի փրփրալի ջուրերուն արծաթագեղ հորձանքները:

Հասանք Մանկական երկաթուղին: Որքան բարեփոխվեր էր ան: Անցյալի տառապալատ բլուրներն ու սարալանջերը հարթվել էին և կանաչապատվել, շինվել էին նորանոր կառուցումներ: Ոլորապտույտ սանդուխտներն բարձրանալով, հասանք Մանկական հրապարակ: Այդտեղ բնական և արվեստական գեղեցկությունները կմրցեին իրար հետ: Կարկաչուն աղբյուրներ, հոսող առուներ կզովացնեին մթնոլորտը: Մանկական հրապարակը շրջապատված է դանազան խաղաղաշտերով, որոնց մուտքերը զարդարված են ալ դրոշակներով և խաղերու նպատակը բնորոշող նշանախոսքերով և խաղաղության ազդագրերով: Հրապարակի ամբողջ տարածության գեղեցկությունը կկազմեն բազմաթիվ մեծ ու փոքր գեղազարդող ծառեր, որոնց ետին հպարտորեն կբարձրանան բարդիններու շարքերը: Քիչ հեռու, Մանկական երկաթուղիի գրասենյակի շենքին առջև, հաստարմատ կասկեհներու և ընկուզենիներու հովանիին տակ քով-քովի շարված են մեր սովետական ժողովուրդի հայտնի ղեկավարներու մեծադիր դիմանկարները: Հրապարակի մեջտեղը, բացօթյա բեմի վրա, երաժիշտներու խումբը հայկական ժողովրդական երգերով ու պարերով կշնցնե իր շուրջը հավաքվողները, որոնց մեծ մասը մանկապարտեզի սանիկներ և պիտներ-դպրոցականներ են, իրենց դաստիարակներու և ծնողներու հետ:



Մանկական հրապարակի մեջ հրջանիկ ան-
ակնկալ մըն էր մեր հանդիպումը Մանկա-
կան երկաթուղիի տնօրեն Փանոս Սարգիսյա-
նի հետ, որ մեր վաղեմի արվեստագետ ըն-
կերներեն էր: Անոր առաջին բացատրությու-
նը հրապարակին վրա ճշվաացող մանկապար-
տեզի երկսեռ սանիկներու մասին եղավ, ո-
րոնք քաղաքի և շրջանային նորակերտ ա-
վաններու մանկապարտեզներու երեխաներն
էին, և որոնք հերթականութեամբ առավոտն
կուգային այնտեղ իրենց դաստիարակներու

կձևավորելին: Անոնցմե շատերը ծանոթ էին
հրապարակի մուտքին զետեղված երկու ար-
ձաններուն, որոնց կմտտենային իրենց ման-
կական անգուսպ քայլերով և կկրկնեն
«Լենին պապի», «Ստալին պապի» անունները:
Երեխաներուն փոքրիկ սրտերը լեցված էին
այն համոզումով, որ ժամը 12-ին Ման-
կական գնացքի շոգեքարշ մեքենան իր շշակի
երկարատե կանչով զիրենք պիտի հրավիրեր
զետեզրին կանգնած այն փոքրիկ զոնագեղ
վագոններուն մեջ, որուն ծառայողները իրենց
բույրերուն և եղբայրներուն պես փոքրահա-
սակ պիտենեն իրեն:



Երևանի Մանկական երկաթուղիի «Հայրենիք» կայարանը


հսկողության տակ զբոսնելու մինչև երեկո,
մանավանդ Մանկական գնացք նստելու հա-
մար: Որքան հաճելի էր մեզ՝ դիտել 6 տա-
րեկանեն հազիվ 8 տարեկան սիրուն ու ա-
ռույգ, զվարթ ու աշխույժ այդ երկսեռ փոք-
րիկներուն դեմքերը, որքան պատկերավոր
էին անոնք իրենց սպիտակ համազգեստնե-
րուն մեջ՝ աղջիկները հարդե մեծ գլխարկնե-
րով, իսկ մանչուկները ծովայինի ամառնա-
յին գլխարկներով: Անոնցմե ոմանք կթռչե-
տեին թիթեռնիկներու և թռչնիկներու ետեքն,
ոմանք երաժշտախումբին նվագած ժողովրդ-
ական պարերու հնչյուններուն տակ իրենց
մանտրտիկ տոտիկները շափի համեմատ

Մանկական հրապարակին մեջ տեսանք
նաև կարմրով փողկապները վզերնին, ա-
ռույգ ու կայտառ 9—12 տարեկան պիտներ-
դպրոցականներու խումբեր, իրենց առանձին
շոկատավարներով: Անոնցմե ոմանք երաժշ-
տության հետ ձայնակցելով կերգերն և կպա-
րեին, ոմանք գնդակ կխաղային, շատեր հրա-
պարակին վրա ցուցադրված մեծադիր դիմա-
նկարներով և արձաններով կզբաղեին, ուրիշ-
ներ ալ աշակերտներուն ուղղված նշանա-
խոսքերը կկարդային:

Մանկական երկաթուղիի տնօրենի առաջ-
նորդութեամբ պատեցանք հրապարակին շուրջ
գտնվող ընդարձակ տարածությունները, ո-

րոնք կրացվեին Հրազդանի հիասքանչ տեսարաններուն վրա: Լսեցինք մեր ընկերոջ նորանոր ընելիքներու մասին, տեսանք տնօրենի ձեռքով նկարված հատակագծերը, որոնցմե քանի մը հատին կառուցումները սկըսեր էին արդեն: Այս կառուցումները պիտի ընդգրկեին մանկական երջանիկ աշխարհի մը կենցաղային հարմարությունները: Ըստ ծրագրի, անտառային մուտքին մոտ պիտի կառուցվի մանկական առողջարան և անտառի վերջավորության՝ կենդանաբանական փոքրիկ պարտեզ մը, իրեն հաջորդող բուսաբանական ալիքով: Մանկական հրապարակին

ուլց շենքին առջև, նորատունկ պարտեզին մեջտեղ զետեղված էր Խաչատուր Աբովյանի արձանը՝ իր խորհրդավոր լուսվյան մեջ արտահայտիչ: Անոր հայացքը ուղղված էր Հրազդանի ափին բարձրացած մանկական այդ հեքիաթային աշխարհին, որ կառուցվեցավ իր սիրելի ժողովուրդի ամրակուտ ձեռքերով: Իր նախազգացումը կատարված էր՝ ուսման մեծ ժողովուրդը փրկած էր հայ ազգը առհավետ, և ինք պիտի հսկեր հավերժորեն իր երազած Սովետական նոր Հայրենիքի երջանիկ մանկության նորանոր սերունդներուն վրա:



Երևանի Մանկական երկաթուղիի գնացքը

շուրջ, ըստ նախագծի, պիտի շինվին մանկական թատրոն, կինո, կրկեսի դահլիճ, գրադարան, ընթերցարան, ինքնագործ արվեստի հատկացված բաժիններ և այլն, որոնք պիտի ծառայեն փոքրահասակներու և դպրոցական աշակերտներու մշակութային և կենցաղային սպասարկման:

Մանկական հրապարակին քիչ հեռու, անոր բարձրագույն մեկ անկյունը, արդեն իր լրացված վիճակին մեջ դիտեցինք նորակառուց գեղեցիկ գրասենյակը՝ նպատակին ծառայող չորս լուսաշող սենյակներով: Այդ նորակա-

Ժամը 12-ին զետեղեցին տկանջնուս հասնող Մանկական գնացքի շշակին ուժեղ կանչը իրար անցուց անտեղ գտնվողները: Մանկապարտեզի հարյուրեք տվելի փոքրիկները իրենց դաստիարակչուհիներու մեկ հրամանով, զույգ առ զույգ ձեռք-ձեռքի պինդ բռնած, խելահեղ ուրախության մեջ սանդուխներն ի վար կաճապարեին դեպի Մանկական երկաթուղիի կայարանը: Անոնց հետևեցան պիոներներու խումբեր: Տնօրենի հրա-

վերսկսված մենք ալ հետևեցանք փոքրիկներուն։ Կայարանի գլխավոր մուտքին, հազիվ 11—12 տարեկան երկաթուղային փոքրիկ պաշտոնյաները իրենց ամառանային համազգեստներով և մանկական սիրունիկ դեմքերով հեքիաթային մանկական աշխարհի մը պատրանքը տվին մեզ։ Երկաթուղային փոքրիկ պաշտոնյաներին ումանք ոսկեշող ուսադիրներ ունեին և մեծ եռուզեռի մեջ էին։ Անոնցմե երկուքը տնօրենի կողմե իրենց անուններով մեզ ծանոթացան։ Տոմսավաճառներ պիտներ ՕՖիկն ու Սուրիկը ի պաշտոնե մեր տոմսերը խնդրեցին։ Որքա՞ն քաղցր էր անոնց ժպտալիքները ամառային իրենց տնօրենի երկու հյուրերու և նկատմամբ, որ մեր կողմե փոխարինվեցավ շոյանքներով։ Քանի մը քայլի վրա տնօրենը մեզ ծանոթացուց կայարանապետ 13 տարեկան շիկահեր Աշոտին, կայտառ ու սիրուն արտաքինով պիտներ մը, որուն զանգակին տված երկրորդ հարվածին հետ մտանք Մանկական գնացք։ Երեք ընկերներս տեղավորվեցանք մանկական վագոնի փոքրիկ նստարաններուն վրա, մեր շուրջը ճկվացող սիրուն փոքրիկներուն հետ։ Կայարանապետ շիկահեր Աշոտի երրորդ զանգակին ղողանջը միացավ շոգեշարժեն արձակվող շշակի սուլոցին, որ յուրահատուկ ներդաշնակությամբ արձագանքեց հայրենի բնության ծոցին մեջ։ Այնտեղ ամեն բան առինքնող ուրախության հուզումներով պարզվեցավ մեր աչքերուն, և Մանկական գնացքը կարմիր ու դեղին դրոշազարդված, իր անիվներուն շափավոր հեքերուն տակ սկսավ մեղմիկ շարժիլ ափերն ի վեր դարավոր Հրազդանի, որուն հորձանուտ փրփուրները մերթ ընթ մերթ կծալթեին բացօթյա փոքրիկ վագոններին ներս։

Մանկական գնացքը հուշիկ կսահեր նորատունկ Միծեռնակաբերդի վիթխարի լանջերուն առջևեն։ Մենք՝ ճամբորդներս, գիտեինք որ Միծեռնակաբերդը մեր մայրաքաղաքի ամենագեղեցիկ զբոսավայրը պիտի կազմեր։ Մեր ընկերոջ՝ Փանոս Սարգիսյանի բացատրություններով մենք տեղեկացանք նաև այն մանրամասնություններուն, որոնց աշխատանքները արդեն սկսեր էին մեր աչքերուն տակ։ Սովետական Հայաստանի ժողովուրդի աննկուն կամքը, անոր հայրենասիրական ոգին և համայնական աշխատանքը արդեն հրաշքներ էին գործեր այդ բարձունքներուն վրա։ Դարավոր լեռնացած ապառաժներուն տեղ փոխարիներ էին բարե-

կարգված արահետներով հերկված տարածություններ, նորատունկ սարալանջերուն՝ անտառային մասեր, մշակված այգիներ։ Զբոսնողները Հրազդան գետի ափերեն վերելակներով պիտի բարձրանային մինչև Միծեռնակաբերդի գահավիժող գագաթներուն կառուցվող զբոսատեղիները։

Տարին մը ի վեր սկսած Միծեռնակաբերդի բարեկարգման մասնակցեցան Երեվանի հիմնարկ-ձեռնարկություններու բազմահազար անձնակազմերը, իրենց հարյուր հազարավոր անդամներով։ Հայկական ՍՍԽ Գիտություններու ակադեմիայի անձնակազմերին մինչև պիտներները, իրենց հանգստի ժամերը զոհելով, մասնակցեցան Միծեռնակաբերդի մաքրագործման առաջին աշխատանքներուն։ Մեր Սովետական Հայաստանի ժողովուրդի հզոր աշխատանքը հիմնավորեց դարավոր Միծեռնակաբերդը, անպետք, լեռնացած ապառաժները դարձնելով ժողովուրդի հանգստի ծառայելու զբոսավայրեր։

Միծեռնակաբերդի գահավիժող մեծ սարալանջի բարձունքին հրճվանքով դիտեցինք նորատունկ բարդիներու անտառ մը, ուրկե տեսարանը կբացվեր Մանկական երկաթուղին մինչև անոր ետին տարածվող Արարատյան դաշտավայրի տարածություններուն վրա, որուն հեռավոր հորիզոնին կանգնած էր Հայոց աշխարհի լեռնացած Մասիսը։

Մանկական գնացքի երկարատև սուլոցին տակ հասանք «Ռուբինություն» կայարանը, ուրկե խոմբ մը պիտներներ իրենց շոկատավարին հետ մտան մեր վագոնները։ Քանի մը վայրկյանեն գնացքը բաժնվելով Հրազդանի ափերեն, մտավ դեպի քաղաքի կեդրոնը շինված փապուղիին (տունելին) մեջ. երկվայրկյանի մթությունը փոքրահասակները դիմավորեցին անվերջանալի ուռաներով և ծափերով, և մենք վերադարձանք Մանկական երկաթուղիի գլխավոր կայարանը, ուր մեզ կսպասեին գնացքին սպասարկող անձնակազմը հերթափոխող փոքրիկ պաշտոնյաները, իրենց շուրջ հավաքված նորանոր փոքրիկ ուղևորներու հետ։

Ուշ ցերեկին մեկնեցանք այդ հեքիաթային մանկական աշխարհին։ Մեր ինքնաշարժը կսուրար հայրենի մայրաքաղաք չքնաղ Երևանի տարածություններին, ուր ամեն բան նոր էր և հավերժական, մեր մանկական երջանիկ աշխարհին պես։

